ՍՏԵՂԾՎԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

12.08.2014 18:35



Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանի 12.08.2014թ. թիվ 294-Լ որոշմամբ հաստատվել է Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) գործունեության կարգը:

Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողով ստեղծելու անհրաժեշտության հիմքում դրվել են հետևյալ հանգամանքները՝

- Հայաստանի Հանրապետությունում փաստաբանության՝ որպես արդարադատության համակարգի կարևորագույն ինստիտուտի զարգացման և մասնագիտության նկատմամբ հարգանքի ձևավորման համար կարևորագույն նախադրյալ է հանդիսանում Փաստաբանների պալատի անդամ փաստաբանների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում գործունեություն ծավալող այլ պետության փաստաբանների իրավունքների պաշտպանությունն ապահովելը, ինչպես նաև այդ իրավունքների արդյունավետ իրացման համար անհրաժեշտ միջավայր ստեղծելը,

- փաստաբանների իրավունքների պաշտպանության հարցում Փաստաբանների պալատի առջև դրված խնդիրների և նպատակների առավել արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է միասնական, նպատակաուղղված և համակարգված քաղաքականություն իրականացնող կառույցի առկայությունն:

Փաստաբանների իրավունքների պաշտպանության ***հանձնաժողովի նպատակն է*** միջոցներ ձեռնարկել փաստաբանների իրավունքներն ու մասնագիտական գործունեությունը բոլոր տեսակի (հատկապես՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների) սպառնալիքներից, խոչընդոտներից կամ ցանկացած տեսակի այլ հակաիրավական միջամտությունից (ոտնձգությունից) պաշտպանելու համար:

Հանձնաժողովը կազմված է լինելու հինգ անդամներից, որոնցից մեկը համակարգելու է Հանձնաժողովի աշխատանքները:

Փաստաբանների պալատի նախագահի 12.08.2014թ. թիվ 295-Ա որոշմամբ հինգ անդամներից նշանակվել են երկուսը՝

- փաստաբան Կարեն Մեժլումյանը (արտոնագիր N 110), և

- փաստաբան Գեղամ Հակոբյանը (արտոնագիր N 794):

Նույն որոշմամբ փաստաբան Կարեն Մեժլումյանը նշանակվել է Հանձնաժողովի համակարգող:

Հանձնաժողովի մյուս երեք անդամները նշանակվելու են մեկ ամսվա ընթացքում:

Բեռնել հանձնաժողովի գործունեության կարգը

Բեռնել հանձնաժողովի անդամների նշանակման որոշումը

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
մամուլի ծառայություն

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })